ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2021 թվականի
փետրվարի 11-ին

«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արտոնագրային վճարների մասին» 2011 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-91-Ն օրենքում (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 8-րդ մասում «2021 թվականի» բառերը փոխարինել «2026 թվականի» բառերով:

Հոդված 2. Օրենքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին հոդված.

«**Հոդված 8.1. Արտոնագրային վճարից ազատումը**

1. 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընդգրկված հաշվետու ժամանակահատվածի (եռամսյակ, կիսամյակ, ինն ամիս, տարի) համար սույն օրենքի անբաժանելի մաս համարվող N 1 և N 2 հավելվածներում նշված գործունեություններն ազատվում են արտոնագրային վճարից։»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ քսանօրյա ժամկետում, կատարվում է Օրենքի անբաժանելի մաս համարվող N 1 և N 2 հավելվածներով նախատեսված գործունեություն իրականացնողների 2021 թվականի (եռամսյակ, կիսամյակ, ինն ամիս, տարի) համար հաշվարկված արտոնագրային վճարի վերահաշվարկ, և ավել վճարված գումարն ուղղվում է հարկ վճարողի ապագայում առաջացող արտոնագրային վճարի մարմանը և (կամ) վերադարձվում:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2021 թ. փետրվարի 19
Ստեփանակերտ
ՀՕ-21-Ն